Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 14.01.2021թ. թիվ 2112124453 որոշման հիմքում դրված փաստական հանգամանքների դեմ բերված գանգատն առանց բավարարման թողնելու մասին

<<05>> 02 2021թ. 7-13- 1479 ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս, վերանայելով Մարկ Կարապետյանի ՄԴ/6329-21 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Երևան քաղաքի Քանաքեռ - Զեյթուն վարչական շրջանի Ա.Ահարոնյան փողոցի 2/2 շենքի 14 բնակարանի բնակիչ Մարկ Կարապետյանը դիմումով խնդրել է բեկանել Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 14.01.2021թ. թիվ 2112124453 որոշումը՝ նշելով, որ կանգառ է կատարել հետիոտնային անցման վրա առջևում խոչընդոտ հանդիսացող տրանսպորտային միջոցի և հետիոտնի պատճառով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 286-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Մարկ Կարապետյանը ճանաչվել է որպես իրավախախտում կատարած անձ, ուստի նրա կողմից ներկայացված գանգատը ենթակա է քննության:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 14.01.2021թ. թիվ 2112124453 որոշումն ենթակա է կատարման հետևյալ պատճառաբանությամբ.

<<Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած տեսանյութն է կամ լուսանկարը, որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես իրավախախտումը հիմնավորող ապացույց վարչական կամ դատական կարգով բողոքարկման վարույթում կարող են օգտագործվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 251-րդ հոդվածով նախատեսված ապացույցները:

ՀՀ կառավարության <<Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների ու պայմանների ցանկը սահմանելու մասին>> 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման 84-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ **կանգառն արգելվում է հետիոտնային անցումների վրա** և շարժման ուղղությամբ հետիոտնային անցումից առաջ՝ 5 մետր մոտ վայրում:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 26-րդ մասի համաձայն՝ տրանսպորտային միջոցների վարորդների կողմից տրանսպորտային միջոցը հետիոտնային անցման վրա կանգնեցնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնհինգապատիկի չափով, տուգանային միավորի կիրառում՝ 1 միավոր:

. Անհրաժեշտ է նշել, որ վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 26-րդ մասով կատարված իրավախախտմամբ նախատեսված չէ նվազ նշանակություն ունենալու որևէ պայման (կանգառի տևողություն, ուղևոր նստեցնելու կամ իջեցնելու նպատակով կանգառ կատարել, դիտավորություն, անզգուշություն և այլն):

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 14.01.2021թ. թիվ 2112124453 որոշման հիմքում դրված տեսանյութի դանդաղեցված և դրվագային ուսումնասիրությունն ակնհայտ է դարձնում այն փաստը, որ դիմումատուի կողմից շահագործվող տրանսպորտային միջոցը 19.12.2020թ. ժամը 12:17-ին Երևան քաղաքի Ուլնեցի – Սևակ փողոցների խաչմերուկի հատվածում կանգառ է կատարում անմիջապես հետիոտնային անցումների վրա:

Ինչ վերաբերվում է դիմումատուի կողմից նշված այն հանգամանքին, որ կանգառ է կատարել հետիոտնային անցման վրա առջևում խոչընդոտ հանդիսացող տրանսպորտային միջոցի և հետիոտնի պատճառով, ապա հարկ է նշել, որ ՀՀ կառավարության <<Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների ու պայմանների ցանկը սահմանելու մասին>> 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման 106-րդ կետի համաձայն՝ հետիոտնային անցումից հետո խցանում առաջանալու դեպքում արգելվում է մուտք գործել անցում, եթե դա կհարկադրի վարորդին կանգնել հետիոտնային անցման վրա:

Այսպիսով, դիմումատուի արարքում ակնհայտ է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 26-րդ մասի զանցակազմը, հետևաբար նրան վարչական պատասխանատվության ենթարկելու մասին որոշումն իրավաչափ է և օրինական:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 286-րդ հոդվածի 1-ին մասի և 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 14.01.2021թ. թիվ 2112124453 որոշման հիմքում դրված փաստական հանգամանքների դեմ բերած գանգատը թողնել առանց բավարարման:
2. Հանձնարարել ՏՄՀԻՎԳՔ բաժին, Մարկ Կարապետյանի անվամբ կայացնել նոր վարչական ակտ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
4. Սույն որոշման օրինակն ուղարկել Մարկ Կարապետյանին և ՃՈ ՏՄՀԻՎԳՔ բաժին:

Ե.Կարապետյան

Կատարող՝ Ռ.Ավետիսյան
Հեռ.՝ 060838402